ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
17.01.20թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-20/30 գնման պայմանագրի

ք. Երևան 19. 06. 2020թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Սահակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 17.01.20թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-20/30 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել 14 /տասնչորս/ օրացուցային օրով, պայմանագրի կատարման վերջնաժամկետ սահմանել մինչև 06.07.2020թ.:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն պայմանագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն պայմանագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	ԿԱՏԱՐՈՂ
«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ	<<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ
ք. Երևան, Արմենակյան 108/4	ք. Երևան, Դ. Անհաղթի 23/6, 5-րդ հարկ
ՀՎՀՀ 01508793	ՀՎՀՀ 01569792
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150001612200100	1570013745270100
	060-52-88-99
	bdo@bdoarmenia.am
	Վ. Սահակյան
---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հեռ.՝+37410 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք Երևան
Դավիթ Անհաղթի 23/6,
5-րդ հարկ , սեն. 7

Նորք-Մարաշ բժշկական կենտրոն ՓԲԸ
տնօրեն պ-ն Մ.Ադամյանին

15 հունիսի 2020թ.

Ref: CO 041-20

Հարգելի պ-ն Ադամյան,

«ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-20/30» ծածկագրով մրցույթի արդյունքներով 17.01.2020թ. կնքվել է պայմանագիր Նորք-Մարաշ բժշկական կենտրոն ՓԲԸ և Բի-Դի-Օ Արմենիա ՓԲ ընկերության միջև՝ Նորք-Մարաշ բժշկական կենտրոն ՓԲԸ կարիքների համար 2019 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ծառայությունների մատուցման վերաբերյալ:
Համաձայն 22.04.2020թ. Համաձայնագիր N1-ի՝ ծառայության մատուցման ժամկետը սահմանված է 2 ամիս՝ այսինքն մինչև 2020թ. հունիսի 22-ը:
Հաշվի առնելով աշխարհում տիրող համաճարակային իրավիճակը, Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությունը և ելնելով նման արտակարգ իրավիճակում մարդկանց կյանքի և առողջության ապահովման գերակայության սկզբունքից, մեր ընկերությունը կատարել է որոշակի փոփոխություններ ծառայությունների մատուցման և պատվիրատուների հետ աշխատանքների կազմակերպման ընթացակարգերում, որոնց հետևանքով ծառայությունների մատուցման ժամկետները փոքր ինչ երկարաձգվում են:

Ելնելով ստեղծված իրավիճակից և աուդիտի աշխատանքների ամբողջ ծավալով, պատշաճ և որակով իրականացման նպատակով խնդրում ենք վերանայել պայմանագրում նշված ծառայության մատուցման ժամկետը՝ երկարացնելով այն 30 օրով:

Հարգանքով,

Վահագն Սահակյան
Տնօրեն

Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ: